

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

- Ընթացիկ հաշվետվություն
- Եռամսյակային ֆինանսական հաշվետվություն
- Տարեկան հաշվետվություն

« ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ » բաց բաժնետիրական ընկերություն,
«ԵՈԳ» ԲԲԸ

թողարկողի ֆիրմային անվանումը (անունը,ազգանունը)
Բաց բաժնետիրական ընկերություն

կազմակերպական - իրավական ձևը
ք.Երևան 0023, Արշակունյաց,12 հեռ. 58-66-18, ֆաքս 52-57-13

գտնվելու վայրը,հասցեն, կապի միջոցները(հեռախոս,ֆաքս, էլ-փոստ և այլն)
N 3 01.07. 2011թ.

հաշվետվության համարն ու ամսաթիվը

տեղաբաշխված արժեթղթերի դասը`	սովորական
արժեթղթերի քանակը`	10.348.896 հատ
արժեթղթերի անվանական արժեքը(արժույթը)`	1000

«Մենք` ստորագրող անձինք, հավաստիացնում ենք,որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ,որոնք կարող են խեղաթյուրել հաշվետվության ամբողջականությունը»:

ստորագրող անձինք` Ազատուհի Մակարյան	գլխ.հաշվապահ		01 .07. 2011թ.
-----	-----	-----	-----
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
-----	-----	-----	-----
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
-----	-----	-----	-----
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները վավերացնում են (ստորագրությունները վավերացվում են տնօրենների խորհրդի նախագահի կամ գործադիր տնօրենի կամ նման իրավասություն ունեցող այլ անձի կողմից)`

Գագիկ Կաֆյան	գլխավոր տնօրեն		01.07. 2011թ..
-----	-----	-----	-----
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

« Ե Ր Ե Վ Ա Ն Ի Ո Ս Կ Ե Ր Չ Ա Կ Ա Ն Գ Ո Ր Ծ Ա Ր Ա Ն » Բ Բ Ը

Ընթացիկ հաշվետվություն

2011թ. տարեկան ժողով

Հասցե	ք. Երևան 023, Արշակունյաց փ. 12
Հեռախոս	52-53-21,58-66-18
Ֆաքս	52-57-13
Էլփոստ	Info@yerjewel.com
Ինտերնետ կայք	www.yerjewel.com

Սույն թվականի հունիսի 28 -ին տեղի ունեցավ «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲ Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը:

Ներկայացվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կազմակերպման և վարման ժամանակ առաջացած հետևյալ փաստաթղթերը՝

1. Ընկերության տնօրենների խորհրդի 31.05.2011թ. կայացած նիստի արձանագրությունը (N 4Խ-11):

2. Տարեկան ընդհանուր ժողովի արձանագրությունը (N 1Ժ -11, 28.06.11թ.):

3. Հաշվիչ հանձնաժողովի N 1, N 2 և N 3 արձանագրությունները:

4. Գլխավոր տնօրենի Ընկերության 2010թ. գործնական վերաբերյալ հաշվետվությունը և Ընկերության ակտիվների, այդ թվում հիմնական միջոցների վերագնահատման աշխատանքների ընթացքի և արդյունքների մասին հաշվետվությունը:

5. 2010թ.-ի գործնական ֆինանսական վերլուծությունը:

6. Վերստուգիչ հանձնաժողովի եզրակացությունը:

7. Բաժնետերերին բաժանված հետևյալ նյութերը՝

- ժողովի օրակարգը;
- Ընկերության 2010թ. տարեկան հաշվետվություն;
- Տնօրենների խորհրդի անդամության առաջարկվող թեկնածուների ցուցակը;
- Քվեաթերթիկի օրինակը:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4 Խ-11

«ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ տնօրենների խորհրդի նիստի

ք. Երևան

31.05. 2011թ.

Ներկա են «ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ տնօրենների խորհրդի հետևյալ անդամները՝

Անդամներ՝	Էմիլ Գրիգորյան - ԵՈԳ -1 « Գնումն » ԲԲԸ Գլխավոր Տնօրեն Գագիկ Աղաջանյան - ԲՏԱ Բանկի ռիսկերի ծառայության պետ Սեյրան Սուվարյան – Երևանի պետական համալսարան Էդուարդ Մաթևոսյան - « ԵՈԳ » ԲԲԸ իրավաբան
Չրավիրված՝	Գագիկ Կաֆյան - « ԵՈԳ » ԲԲԸ Գլխավոր տնօրեն:

Ձեկույցով հանդես եկավ «ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ Գլխավոր տնօրեն Գ. Կաֆյանը, որը տեղակացրեց, որ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության պահանջներն ապահովելու նպատակով Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը պետք է կայանա մինչև 2011թվականի հունիսի 30-ը:

Այս կապակցությամբ որոշեցին՝

Ընկերության 2010 թվականի գործունեության տարեկան ընդհանուր ժողովը իրավիրել 2011թվականի հունիսի 28-ին, ժամը 16.00, ք.Երևան, Արշակունյանց 12 հասցեում:

Հաստատել «ԵՈԳ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի հետևյալ օրակարգը՝

1. Ընկերության 2010 թվականի գործունեության տարեկան հաշվետվության հաստատում:
2. Ընկերության 2010 թվականի ֆինանսական գործունեությունն ամփոփող տարեկան հաշվետվության հաստատում:
3. Ընկերության 2010 թվականի շահույթի և վնասի հաշվետվության հաստատում:
4. Ընկերության վերահսկողի հաշվետվության հաստատում:
5. Տնօրենների խորհրդի անդամների ընտրություն:
6. Ընկերության ակտիվների, այդ թվում հիմնական միջոցների վերագնահատման աշխատանքների ընթացքի և արդյունքների մասին հաշվետվության ներկայացում:

Անդամներ՝

**Էմիլ Գրիգորյան
Գագիկ Աղաջանյան
Սեյրան Սուվարյան
Էդուարդ Մաթևոսյան**

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 1Ժ -11

«Երևանի ոսկերչական գործարան» Բաց Բաժնետիրական
Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի,
կայացած 2011թ. հունիսի 28 -ին, ժամը 16.00

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝ Ընկերության 10 348 896 տեղաբաշխված բաժնետոմսերի
սեփականատերերից թվով 8.308.932 բաժնետոմսերի սեփականատերեր
կամ նրանց լիազոր ներկայացուցիչներ
(80,29%)

Բաց քվեարկությամբ ժողովի նախագահ ընտրվեց տնօրենների խորհրդի
անդամ Էմիլ Գրիգորյանը, քարտուղար ընտրվեց Ա. Ժամհարյանը (միաձայն):

Միաձայն ընտրվեց նաև հաշվիչ հանձնաժողովը, բաղկացած էրեք հոգուց՝
Ժամհարյան Արմինե, Յովսեփյան Խանում, Սկրտչյան Մարինե:
Ժողովին ներկայացվեց հետևյալ օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Ընկերության 2010 թվականի գործունեության տարեկան հաշվետվության
հաստատում:
2. Ընկերության 2010 թվականի ֆինանսական գործունեությունը ամփոփով
տարեկան հաշվետվության հաստատում:
3. Ընկերության 2010թ.շահույթի և վնասի հաշվետվության հաստատում:
- 4.Ընկերության վերստուգողի 201 0թ. հաշվետվության հաստատում:
5. Տնօրենների խորհրդի անդամների ընտրություն:
- 6 . Ընկերության ակտիվների, այդ թվում հիմնական միջոցների վերագնահատման
աշխատանքների ընթացքի և արդյունքների մասին հաշվետվության ներկայացում:

Բաց քվեարկությամբ ժողովի օրակարգը հաստատվեց միաձայն:
Ընկերության 2010թ. գործունեության տարեկան հաշվետվությունը բաժնետերերի
ուշադրությանը ներկայացրեց Ընկերության գլխավոր տնօրեն Գ. ԿԱՖՅԱՆԸ:

Ելույթից առաջ նա առաջարկեց, հաշվի առնելով այն հանգամանքը որ օրակարգի 1-ին և 6-րդ հարցերը միմյանց հետ կապված են, ներկայացնել ժողովի ուշադրությանը 1-ին և 6-րդ հարցերը մեկ բլոկով: Ժողովը տվեց իր հավանությունը:

Գ. Կաֆյանը նախ ներկայացրեց Ընկերության գործունեությունը 2010 թ.: Նա նշեց , որ շատ բարդ և լարված տարի է եղել Ընկերության համար: Խորը ճգնաժամային վիճակը էապես չի փոխվել: Ոսկու գնի անկանոն, կտրուկ փոփոխությունները , ընդհանուր աճի տեմպերից, կաթվածահար է անում մանրածախ առևտուրը, ինչն անմիջապես շրթայական կապով անդրադառնում է Ընկերության գործունեության վրա:

2010թ. իրացումից հասույթը կազմել է շուրջ 58 մլն. դրամ, 2009 թ. 344 մլն. դրամի դիմաց, որը ինքնին արդեն շատ ցածր ցուցանիշ է: Սա հետևանք է ճյուղում խորը ճգնաժամային պրոցեսների:

2010 թ. արդյունքով վնասը կազմել է շուրջ 215 մլն. դրամ : Սրա շուրջ 50 % կապված չէ Ընկերության գործունեության հետ 2010 թ. , այլ նախկին տարիներին / մինչև 2005 թ. / չձևակերպված և դուրս չգրված վնասների 2010թ. դուրս գրման արդյունք է: Վնասի մյուս մասը հիմնականում կապված է Ընկերության վարչական ծախսերի հետ, որոնք իրացման ծավալների կտրուկ անկման պայմաններում վնասի պատճառ են դառնում: Այս ծախսերը հիմնականում կապված են անձնակազմի աշխատավարձի ,պետքյուջե կատարվող վճարների, կայուն այլ ծախսերի , որոնք կատարվում են անկախ իրացման ծավալների:

Ընկերությունն աշխատում է պահպանել իր բարձրորակ կադրերը , կապված այն ծրագրերի հետ , որոնց մասին ես կանդրադառնամ 6-րդ հարցի շրջանակներում:

2010թ. Ընկերության գործունեության վրա իրենց անմիջական նեգատիվ ազդեցությունն են թողել մեկը մյուսին հետևող, անգամ զուգահեռ իրականացվող ստուգումները պետական տարբեր վերահսկող մարմինների կողմից: Ընկերության ղեկավարությունը, առաջատար մասնագետները ամբողջ 2010թ. ընթացքում ծանրաբեռնված կերպով ներգրավված են եղել այդ պրոցեսներին:

Այնուհետև պ-ն Գ.Կաֆյանը ներկայացրեց հաշվետվություն օրակարգի 6-րդ հարցի կապակցությամբ:

Նա նշեց, որ դեռևս 2009 թ. Ընկերության տնօրինության կողմից մշակվեց և ներկայացվեց հետագա զարգացման ծրագիր: Մենք հաշվի եինք առել ճգնաժամային

երևույթները տնտեսությունում ընդհանրապես և մեր ճյուղում մասնավորապես , վերլուծել էինք ընկերության գործունեությունը բնութագրող ցուցանիշների դինամիկան և եկել էինք եզրահանգման, որ անհրաժեշտ են կտրուկ քայլեր վիճակի էլ ավելի վատթարացում թույլ չտալու համար: Անհրաժեշտ քայլերից ամենակարևորը նշվել էր Ընկերության սեփականաշնորհումը: Ծրագրի նպատակն էր օգտագործելով ընկերությունում տարիներով ձևավորված կոնստրուկտորների, տեխնոլոգների , ոսկերիչ – մոդելավորողների, նկարիչ-դիզայներների եզակի պրոֆեսիոնալ ունակությունները, ձեռնարկությունում ներդրված բարձր տեխնոլոգիաները, գործարար հմտությունը և կապերը ավանդական շուկաներում, Ընկերությունը դուրս բերել ճգնաժամային իրավիճակից:

Այնուհետև ՀՀ Վարչապետի հանձնարարականով Ընկերությունում 2010թ իր աշխատանքներն է իրականացրել ՀՀ մշտապես գործող ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի արձանագրության հիման վրա ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության պետի հրամանի հիման վրա ստեղծված Ընկերության ակտիվները գույքագրող աշխատանքային խումբը , որում ընդգրկված էին առաջատար մասնագետներ տարբեր նախարարություններից, Ընկերության գլխավոր տնօրենը և գլխավոր հաշվապահը :

Այս աշխատանքների արդյունքով Ընկերությանն առաջարկվեց մշակել միջոցառումների ծրագիր և ներկայացնել Ընկերության զարգացման ծրագիր: Մեր կողմից մշակվեց միջոցառումների ծրագիր , որը ուղարկվեց էկոնոմիկայի նախարարություն և որի իրականացման վերաբերյալ պարբերաբար տեղեկացվում է էկոնոմիկայի նախարարությունը: Վերամշակվել և ներկայացվել է Ընկերության զարգացման ծրագիրը:

Ձեկուցողը սպառիչ պատասխաններ տվեց բաժնետերերի կողմից բարձրացված բոլոր հարցերին:

Հաշվետվությունը՝կապված օրակարգի 1-ին և 6-րդ հարցերի վերաբերյալ, դրվեց քվեարկության, որի արդյունքներն են՝

կողմ`	- 8.308.932	դեմ`	- 0	ձեռնպահ`	- 0
-------	-------------	------	-----	----------	-----

Օրակարգի երկրորդ և երրորդ հարցերի վերաբերյալ զեկուցեց Ընկերության գլխավոր հաշվապահ Ազատուհի Մակարյանը: Ա. Մակարյանը ներկայացրեց

Ընկերության 2010թ. ֆինանսական գործունեությունն ամփոփող տարեկան հաշվետվությունը և Ընկերության 2010թ. շահույթի և վնասի հաշվետվությունը:

2010թ. ֆինանսական գործունեությունն ամփոփող տարեկան հաշվետվությունը դրվեց քվեարկության, որի արդյունքներն են.

կողմ` - - 8.308.932 դեմ` - 0 ձեռնպահ` - 0

Ընկերության 2010թ. շահույթի և վնասի հաշվետվությունը դրվեց քվեարկության, որի արդյունքներն են.

կողմ` - 8.308.932 դեմ` - 0 ձեռնպահ` - 0

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց վերստուգող Յ. Հակոբյանը: Նա նշեց, որ հաշվապահական և ֆինանսական հաշվետվությունները գնահատվում են բավարար:

Հաշվետվությունը և «Ե Ո Գ» ԲԲԸ Վերստուգողի գործունեության կանոնակարգի հաստատման հարցը դրվեց քվեարկության, որի արդյունքներն են.

կողմ` - 8.308.932 դեմ` - 0 ձեռնպահ` - 0

Օրակարգի 5-րդ հացով ելույթ ունեցավ խորհրդի անդամ պ-ն Սերյան Սուվարյանը, որը առաջարկեց հաստատել խորհուրդը հետևյալ կազմով` Արա Պետրոսյան - ՀՀ էկանոմիկայի նախարարի տեղակալ, Էմիլ Գրիգորյան ԵՈԳ-1 «ԳՆՈՍՈՆ»ԲԲԸ Գլխավոր տնօրեն, Գագիկ Աղաջանյան -ԲՏԱ Բանկի ռիսկերի ծառայության պետ և Սերյան Սուվարյան – Երևանի պետական համալսարան. Էդուարդ Մաթևոսյան «ԵՈԳ»ԲԲԸ, Իրավաբան:

Տնօրենների խորհրդի անվանական կազմը քննարկումներից հետո դրվեց գումարային քվեարկության և ստացավ հետևյալ քանակությամբ ձայներ:

Արա Պետրոսյան կողմ` - 8 308 932
 Էմիլ Գրիգորյան կողմ` - 8 308 932
 Գագիկ Աղաջանյան կողմ` - 8 308 932

Սեյրան Սուվարյան կողմ՝ - 8 308 932
 Էդուարդ Մաթևոսյան - կողմ՝ - 8 308 932

Համաձայն հաշվիչ հանձնաժողովի տվյալների նշված թեկնածուները ընտրվեցին տնօրենների խորհրդի կազմում: Ժողովը հաստատեց հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ

1. Ընկերության 2010թ. գործունեության տարեկան հաշվետվությունը հաստատել:
2. Ընկերության 2010թ. ֆինանսական գործունեությունը ամփոփող տարեկան հաշվետվությունը հաստատել:
3. Ընկերության 2010թ. շահույթի և վնասի հաշվետվությունը հաստատել:
4. Հաստատել 2010թվականի վերստուգողի հաշվետվությունը :
5. Տնօրենների խորհուրդի անդամներ ընտրել հետևյալ անձինք՝

Արա Պետրոսյան ՀՀ էկանոմիկայի նախարարի տեղակալ
 Էմիլ Գրիգորյան - ԵՈԳ -1 « Գնումն » ԲԲԸ Գլխավոր Տնօրեն
 Գագիկ Աղաջանյան -ԲՏԱ Բանկի ռիսկերի ծառայության պետ
 Սեյրան Սուվարյան – Երևանի պետական համալսարան
 Էդուարդ Մաթևոսյան - « ԵՈԳ » ԲԲԸ իրանական հարցերով խարհրդ

- 6 . Հաստատել Ընկերության ակտիվների, այդ թվում հիմնական միջոցների վերագնահատման աշխատանքների ընթացքի և արդյունքների մասին հաշվետվությունը:

ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝
 ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ
 Ա. ԺԱՄՅԱՆՅԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

« ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ 2010 թվականի տարեկան գործունեության վերաբերյալ և հաշվետվություն Ընկերության ակտիվների, այդ թվում հիմնական միջոցների վերագնահատման աշխատանքների ընթացքի և արդյունքների վերաբերյալ

Օրակարգի 1-ին հարցով Ելույթ ունեցավ Ընկերության գլխավոր տնօրեն Գ.Վ.Կաֆյանը:

Ելույթից առաջ նա առաջարկեց, հաշվի առնելով այն հանգամանքը որ օրակարգի 1-ին և 6-րդ հարցերը միմյանց հետ կապված են, ներկայացնել ժողովի ուշադրությանը 1-ին և 6-րդ հարցերը մեկ բլոկով: Ժողովը տվեց իր հավանությունը:

Գ. Կաֆյանը նախ ներկայացրեց Ընկերության գործունեությունը 2010 թ.: Նա նշեց , որ շատ բարդ և լարված տարի է եղել Ընկերության համար: Խորը ճգնաժամային վիճակը էապես չի փոխվել: Ոսկու գնի անկանոն, կտրուկ փոփոխությունները , ընդհանուր աճի տենդենցով, կաթվածահար է անում մանրածախ առևտուրը, ինչն անմիջապես շղթայական կապով անդրադառնում է Ընկերության գործունեության վրա:

2010թ. իրացումից հասույթը կազմել է շուրջ 58 մլն. դրամ, 2009 թ. 344 մլն. դրամի դիմաց, որը ինքնին արդեն շատ ցածր ցուցանիշ է: Սա հետևանք է ճյուղում խորը ճգնաժամային պրոցեսների:

2010 թ. արդյունքով վնասը կազմել է շուրջ 215 մլն. դրամ : Սրա շուրջ 50 % կապված չէ Ընկերության գործունեության հետ 2010 թ. , այլ նախկին տարիներին / մինչև 2005 թ. / չձևակերպված և դուրս չգրված վնասների 2010թ. դուրս գրման արդյունք է: Վնասի մյուս մասը հիմնականում կապված է Ընկերության վարչական ծախսերի հետ,. որոնք իրացման ծավալների կտրուկ անկման պայմաններում վնասի պատճառ են դառնում: Այս ծախսերը հիմնականում կապված են անձնակազմի աշխատավարձի ,պետբյուջե կատարվող վճարների, կայուն այլ ծախսերի , որոնք կատարվում են անկախ իրացման ծավալների:

Ընկերությունն աշխատում է պահպանել իր բարձրորակ կադրերը , կապված այն ծրագրերի հետ , որոնց մասին ես կանդրադառնամ 6-րդ հարցի շրջանակներում:

2010թ. Ընկերության գործունեության վրա իրենց անմիջական նեգատիվ ազդեցությունն են թողել մեկը մյուսին հետևող, անգամ զուգահեռ իրականացվող ստուգումները պետական տարբեր վերահսկող մարմինների կողմից: Ընկերության ղեկավարությունը, առաջատար մասնագետները ամբողջ 2010թ. ընթացքում ծանրաբեռնված կերպով ներգրավված են եղել այդ պրոցեսներին:

Այսքանը ինչ վերաբերվում էր 1-ին հարցին: Թույլ տվեք անցնել 6-րդ հարցին , որը հիմնականում նվիրված է ստեղծված իրավիճակից դուրս գալու գործառնություններին:

Վերը նշված ստուգումներին զուգահեռ ՀՀ Վարչապետի հանձնարարականով Ընկերությունում 2010թ իր աշխատանքներն է իրականացրել ՀՀ մշտապես գործող ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի արձանագրության հիման վրա ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության պետի հրամանի հիման վրա ստեղծված Ընկերության ակտիվները գույքագրող աշխատանքային խումբը , որում ընդգրկված էին առաջատար մասնագետներ տարբեր նախարարություններից, Ընկերության գլխավոր տնօրենը և գլխավոր հաշվապահը :

Հարցը կապված է նրա հետ , որ դեռևս 2009 թ. Ընկերության տնօրինության կողմից մշակվեց և ներկայացվեց հետագա զարգացման ծրագիր: Մենք հաշվի եինք առել ճգնաժամային երևույթները տնտեսությունում ընդհանրապես և մեր ճյուղում մասնավորապես , վերլուծել էինք ընկերության գործունեությունը բնութագրող ցուցանիշների դինամիկան և եկել էինք եզրահանգման, որ անհրաժեշտ են կտրուկ քայլեր վիճակի էլ ավելի վատթարացում թույլ չտալու համար: Անհրաժեշտ քայլերից ամենակարևորը նշվել էր Ընկերության սեփականաշնորհումը: Ծրագրի նպատակն էր օգտագործելով ընկերությունում տարիներով ձևավորված կոնստրուկտորների, տեխնոլոգների , ոսկերիչ – մոդելավորողների, նկարիչ-դիզայներների եզակի պրոֆեսիոնալ ունակությունները, ձեռնարկությունում ներդրված բարձր տեխնոլոգիաները, գործարար հմտությունը և կապերը ավանդական շուկաներում, Ընկերությունը դուրս բերել ճգնաժամային իրավիճակից:

Սրան հետևեց իմ կողմից արդեն նշված Ընկերության ակտիվների գույքագրման աշխատանքները ՀՀ Վարչապետի որոշմամբ: Այս աշխատանքների արդյունքով Ընկերությանն առաջարկվեց մշակել միջոցառումների ծրագիր և ներկայացնել Ընկերության զարգացման ծրագիր: Մեր կողմից մշակվեց միջոցառումների ծրագիր , որը ուղարկվեց էկոնոմիկայի նախարարություն և որի իրականացման վերաբերյալ

պարբերաբար տեղեկացվում է էկոնոմիկայի նախարարությունը: Վերամշակվել և ներկայացվել է Ընկերության զարգացման ծրագիրը:

Ահա այս գործառույթների տառով և տրամաբանությամբ Ընկերությունում իրականացվել են և ընթանում են հետևևյալ աշխատանքները`

Ընկերությունում օգտագործման համար ոչ պիտանի, ինչպես նաև ֆիզիկապես մաշված գույքի դուրս գրման և / կամ / օտարման աշխատանքներ:

Թանկարժեք մետաղների շուկայական գների փոփոխությունների հետ կապված «Թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի և թանկարժեք քարերի վերագնահատման կարգ»-ի մշակման, սահմանված կարգով հաստատման և հաշվապահական հաշվառման քաղաքականությունում կիրառման աշխատանքներ

Հիմնական միջոցների և արագամաշ առարկաների վերագնահատման և օգտակար ծառայության ժամկետների վերանայման աշխատանքներ

1-ին կետով իրականացվել են աշխատանքներ, տրվել են գնահատականներ գույքի վիճակի վերաբերյալ, որից ելնելով պետք է իրականացվեն դուրս գրման և / կամ / օտարման գործառույթները: Սակայն պետք է նշեն, որ ստացվել է հիմնական միջոցների դուրս գրման նոր կարգ, որի համաձայն այդ աշխատանքը կատարող հանձնաժողովի կազմում պետք է ընդգրկվեն էկոնոմիկայի նախարարության երկու ներկայացուցիչ:

Սրա հետ կապված այս աշխատանքները կվերսկսվեն նորից , հանձնաժողովի նոր կազմով և կավարտվեն 31-ը հուլիսի 2011թ.: Նյութերը կներկայացվեն Ընկերության Տնօրենների Խորհրդին:

2-րդ կետի համաձայն մշակվել է Թանկարժեք մետաղների շուկայական գների փոփոխությունների հետ կապված «Թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի և թանկարժեք քարերի վերագնահատման կարգ»-ը :

Կցանկանայի ներկայացնել մի քանի հիմնական բազային դրույթներ` թանկարժեք մետաղների վերագնահատումը իրականացվում է տարին մեկ անգամ, առ 01.01 ամեն տարվա , հիմք ընդունելով նախորդող տարվա Լոնդոնի թանկարժեք մետաղների բորսայի վերջին երեկոյան /PM/ ֆիքսինգը:

Թանկարժեք քարերի վերագնահատումը կատարվում է տարին մեկ անգամ, առ 01.01 ամեն տարվա, հիմք ընդունելով նախորդող տարվա թանկարժեք քարերի համաշխարհային գների ամփոփագիր Rapoport- ի վերջին տվյալները:

3-րդ կետով ըստ ժամանակացույցի աշխատանքները պետք է ավարտվեն մինչև 31 հուլիսի ընթացիք տարվա: Պետք է նշեն, որ շենք շինությունների վերագնահատման համար պահանջվում է լիզենզավորված կազմակերպություն: Դրա համար մենք նախորոք մամուլի միջոցով հայտարարել էինք մրցույթ: Մրցույթի արդյունքներով Ընկերության Տնօրենների Խորհուրդը հաստատեց « Ամերիա Աուդիտ» կազմակերպությանը:

Ես ներկայացրեցի Ձեզ Ընկերության տարվա շատ կարևոր աշխատանքներ , որոնք ուղղված են դեպի ապագա, Ընկերության հետագա զարգացմանը նպաստելուն: Այս աշխատանքների արդյունքով Ընկերության գույքագրված ակտիվները կստանան իրենց իրական շուկայական արժեքը, Ընկերությունը կազատվի ոչ պիտանի ակտիվներից:

Սահմանված կարգով այս գործառույթների հիման վրա կիրականացվի Կանոնադիր կապիտալի նվազեցում: Հաջորդ քայլով Ընկերությունը, արդեն իր իրական պատկերով, առկա ներուժով կներկայացվի սեփականաշնորհման:

Մեր ներկայացրած զարգացման ծրագրում առաջարկել ենք սեփականաշնորհման մի քանի տարբերակ`

1. Ոսկերչական արտադրությունում բարձր տեխնոլոգիաների ուղղությունների զարգացումն և առկա արտադրական հզորությունների առավել արդյունավետ օգտագործումն ապահովելու, նկարիչ-դիզայներների, կոնստրուկտորների և տեխնոլոգների պրակտիկ աշխատանքային փորձով հմուտ պրոֆեսիոնալ կադրերը պահպանելու նպատակով , հաշվի առնելով որ «Երևանի Ոսկերչական Գործարան»ԲԲԸ և Երևանի ոսկերչական գործարան -1 «Գնոմոն» ԲԲԸ աշխատում են միասնական տեխնոլոգիական ցիկլով և փաստացի մեկ արտադրական օրգանիզմ են, երկու ընկերության 1455 բաժնետերերը միևնույն բաժնետերերն են, ռացիոնալ և տրամաբանական է միաձուլել «Երևանի Ոսկերչական Գործարան» ԲԲԸ և Երևանի Ոսկերչական գործարան -1 «Գնոմոն» ԲԲԸ , սեփականաշնորհելով «Երևանի Ոսկերչական Գործարան» ԲԲԸ ուղղակի վաճառքի եղանակով նախապես հայտնի գնորդի` Երևանի Ոսկերչական Գործարան -1 « Գնոմոն»-ին:

2. «Երևանի Ոսկերչական Գործարան» ԲԲԸ հանձնել կոնցեսիա` Երևանի Ոսկերչական Գործարան -1 « Գնոմոն»-ին:

3. «Երևանի Ոսկերչական Գործարան» ԲԲԸ ներկայացնել ազատ վաճառքի

Սեփականաշնորհման գործընթացը իրականացնելուց հետո կծավալվեն ընկերության հզորությունների աստիճանաբար ծանրաբեռնման , ավանդական շուկաներում դիրքերի ամրապնդման և ընդլայնման պրոցեսները:

Ահա այն աշխատանքները, որ ընկերության տնօրինությունն իրականացնում է, սերտ աշխատելով Տնօրենների Խորհրդի հետ և համագործակցելով Էկոնոմիկայի նախարարության հետ:

Սա էր իմ համառոտ հաշվետվությունը օրակարգի 1-ին և 6-րդ հարցերի վերաբերյալ և ես կխնդրեի, որ մեր ժողովը, ընկերության կառավարման բարձրագույն մարմինն իր հավանությունը տա և հաստատի մեր գործունեության վերը նշված հիմնական ուղղությունները:

Գլխավոր տնօրեն-

Գ. Կաֆյան

ԸՆԿԵՐՈՒՅՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒՅՅՈՒՆ

Հաշվի առնելով 2010թ. «Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ տարեկան ֆինանսական հաշվետվությունը, Ձեզ ենք ներկայացնում ընկերության 2010 թվականի ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող որոշ տվյալներ.

Ընկերության կանոնադիր կապիտալը կազմում է 10 348 896 հազ.դրամ, սեփական կապիտալը 3 395 632.0 հազ.դրամ: Ընդհանուր ակտիվները հաշվետու տարվա վերջի դրությամբ կազմել է 4 392 513,0 հազ.դրամ, այդ թվում ոչ ընթացիկ ակտիվները 842 077,0 հազ.դրամ, ընթացիկ ակտիվները՝ 3 550 436,0 հազ.դրամ, որոնք կազմում են ընդհանուր ակտիվների համապատասխանաբար 19.17% և 80.83%-ը:

Ընկերության ընդհանուր գնումների գծով կրեդիտորական պարտավորությունն է 845 802.0 հազ. դրամ, որից 844 280.0 հազ.դրամը կազմում է Երևանի Ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ին, իսկ Ընկերության նկատմամբ վաճառքների գծով դեբիտորական պարտավորություն է 2 435 688.0 հազ. դրամ, որից 2 433 571.0 հազ.դրամը կազմում է ԵՈԳ-1 «Գնոմոն» ԲԲԸ-ին:

2010 թվականի ընթացքում Ընկերության արտադրանքի, ապրանքների և ծառայությունների իրացումից հասույթը կազմել է 57 973.0 հազ.դրամ, նախորդ՝ 2009թ., 344 648.0 հազ. դրամի դիմաց: 2010թ. Ընկերության իրացված արտադրանքի ինքնարժեքը կազմել են 48 731.0 հազ. դրամ, նախորդ՝ 2009թ., 294 684. հազ. դրամի դիմաց, իսկ վարչակառավարչական ծախսերը կազմել են 117 747. հազ. դրամ, նախորդ՝ 2009թվականի, 108 859.0 հազ. դրամի դիմաց: Նախորդ տարվա համեմատ մոտ 5.9 անգամ նվազել է իրացման ծախսերը, իսկ վարչական ծախսերը մոտ 9 միլոն դրամի չափ ավելացել են:

2010թ. ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում հաշվետու տարվա վնասը կազմել է 215 028.0 հազ.դրամ.: Վնասի մեծության կտրուկ աճը պայմանավորված է մի շարք հանգամանքներով.

Ոսկերչական արտադրության ոլորտում տարին էլ ավելի ճգնաժամային էր, վերցնենք միայն ոսկու գների կտրուկ տատանումները, մոտ 29% գնաճ 1 գրամ մաքուր ոսկու մեջ (34.6 \$-ից մինչև 44.7 \$):

Ընկերությունն ամբողջ 2010թ. ընթացքում գտնվել է անընդմեջ ստուգումների մեջ, խանգարվել է ընկերության բնականոն գործունեությունը:

Նախորդ տարիներից եկած՝ 2005 թվականից առաջ, հաշվապահական անալիտիկ և սինթետիկ հաշիվների ճշտումից վնասի արհեստական աճ: Մասնավորապես միայն վերամշակման տրված նյութեր հաշվի ճշտումից 88 904.0 հազ.դրամով արհեստականորեն ավելացել է հաշվետու տարվա վնասը:

Ընկերությունը շահութահարկի գծով առ 01.01.11 թվականի դրությամբ ունի 67 377.0 հազ. դրամ գերավճար: Իսկ ԱԱՀ-ի գծով Ընկերության գերավճարը պետբյուջեին կազմում է 37 615.7 հազ.դրամ:

Ընկերությունը բյուջեի, սոցվճարների գծով իր պարտավորությունները կատարում է ժամանակին:

Գլխավոր հաշվապահ

Ա.Մակարյան

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ-ի

2010թ. տարեկան հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսական
հաշվետվությունների հավաստիության մասին

Ք. ԵՐԵՎԱՆ

« 12 » « մայիսի » 2011թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ-ի 2010 թվականի տարեկան հաշվապահական հաշվեկշռում և ֆինանսական հաշվետվություններում ներկայացված տեղեկատվության արժանահավատությունը ճշտելու նպատակով Ընկերության Վերստուգողի կողմից իրականացվել է Ընկերության հաշվետվություններում և ֆինանսական փաստաթղթերում բովանդակվող տեղեկությունների հավաստիության ստուգում: Ստուգումը կազմակերպվել և իրականացվել է «Բաժնետիրական ընկերությունների մասին», «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքների, Հայաստանի Հանրապետության օրենսդրական այլ ակտերի, Ընկերության կանոնադրության և ՀՀ կառավարության 2005թվականի մայիսի 19-ի N 1187-Ն որոշման պահանջների համաձայն, Ընկերության 01.07.2010թ. կայացած բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի կողմից հաստատված «ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ – ի Վերստուգողի գործունեության կանոնակարգի համապատասխան:

Ստուգումը սկսվել է 2011թ. ապրիլի 5-ին և ավարտվել մայիսի 6-ին:

Ստուգմամբ պարզվեց.

«ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ ստեղծվել է ՀՀ կառավարության 2000թ. դեկտեմբերի 31-ի թիվ 907 որոշման, ՀՀ Արդյունաբերության և առևտրի նախարարության 16.01.2001թ. թիվ 9 հրամանի, ինչպես նաև Ընկերության ընդհանուր ժողովի որոշման համաձայն:

Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է՝ Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Արժեթղթերի

շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության օրենսդրական այլ ակտերով և իր կանոնադրությամբ:

Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են՝ պերճանքի առարկաների, ոսկերչական իրերի և թանկարժեք զարդեղենի, ժամացույցների, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, կիսաֆաբրիկատների արտադրություն և վաճառք, նոր տեխնոլոգիաների մշակում, մասնագետների ուսուցման, վերապատրաստման, ցուցահանդեսների և տոնավաճառների կազմակերպում:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 10 348 896 000 դրամ, որը կազմում է 10 348 896 հատ սովորական անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1000 դրամ: Բոլոր 10 348 896 բաժնետոմսերը տեղաբաշխված են բաժնետերերի միջև և լրիվ վճարված են նրանց կողմից, ընդ որում 8 279 117 սովորական անվանական բաժնետոմսեր (80 տոկոսը) համարվում են պետական սեփականություն (տնօրինվում են ՀՀ էկանոմիկայի նախարարության կողմից), իսկ 2 069 779 սովորական անվանական բաժնետոմսեր (20 տոկոսը) սեփականության իրավունքով պատկանում են մասնակի անհատույց սեփականաշնորհման մասնակիցներին:

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը բաժնետերերի ընդհանուր ժողովն է, ընդհանուր ղեկավարումն իրականացնում է տնօրենների խորհուրդը, իսկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գլխավոր տնօրենը:

Ընկերության կառուցվածքում հաշվապահությունը գործում է որպես առանձին ստորաբաժանում:

2010 թվականին Ընկերությունը գույքի, պարտավորությունների և տնտեսական գործառնությունների հաշվառումը վարում է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից 2000թ. դեկտեմբերի 29-ի թիվ 319 հրամանով հաստատված կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլանի, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, հաշվապահական հաշվառմանը վերաբերող օրենքների և իրավական ակտերի համաձայն:

Հաշվապահական հաշվառման կազմակերպման համար պատասխանատու է Գլխավոր տնօրենը:

Ընկերությունում հաշվապահական հաշվառումն իրականացվում է 1C-Ջեռնարկություն հաշվապահական ծրագրով: 2010 թվականի համար գործել է Ընկերության գլխավոր տնօրենի կողմից 2002 թվականին հաստատված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հիմնական միջոցները հաշվառվում են ըստ օբյեկտների, որոնք ունեն իրենց գույքային համարները: Հաշվետու ժամանակաշրջանում հիմնական միջոցների վերագնահատում չի իրականացվել, չեն կատարվել հիմնական միջոցների օտարման, իրացման գործարքներ, ընկերությունն իր տրամադրության տակ չունի անհատույց ստացված և վարձակալված հիմնական միջոցներ: Վարձակալությամբ տրված հիմնական միջոցների համար առկա են վարձակալության պայմանագրերը, և տարվում է ընթացիկ հաշվառում: Դեբիտորական պարտքերը գործառնական վարձակալության գծով 01.01.11թ. դրությամբ կազմել են 4683.4 դրամ: Բոլոր տնտեսական գործառնությունների արդյունքները ժամանակին գրանցվում են հաշվապահական հաշվառման հաշիվներում: Ընկերությունում հաշվապահական հաշվառումը վարող համակարգչային ծրագրի թրությունների պատճառով նախորդ տարի արձանագրված անալիտիկ և սինթետիկ հաշվառման տվյալների անհամապատասխանությունները 01.01.2010թ. դրությամբ ճշտված են:

Վերստուգողի կողմից ուսումնասիրվել է ղեկավար մարմինների որոշումների կատարման ընթացքը, ստուգվել են փաստաթղթերի համապատասխանությունը օրենքներին: Դիտարկվել են կանխավճարային հաշվետվությունները, գործուղման վերաբերյալ հրամանները: Ընկերության կողմից չի վարվում կանխավճարային հաշվետվությունների գրանցամատյան, բացակայում են ներկայացուցչական ծախսերի նախահաշիվները, դրանց հաստատման մասին փաստաթուղթը:

Ընկերության ֆինանսական հաշվետվությունների փաթեթը կազմված է հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենսդրության պահանջներին համապատասխան:

Շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը 01.01.2010թ.-ի դրությամբ կազմել է 78216.0 հազ. դրամ, տարվա ընթացքում հաշվի դեբետային շրջանառությունը կազմել է 4419,0 հազ. դրամ, իսկ կրեդիտային շրջանառությունը կազմել է 10191,0 հազ. դրամ: 01.01..2011թ.-ի դրությամբ շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցների արժեքը կազմել է 302367.0 հազ. դրամ, հաշվեկշռային արժեքը՝ 72445.0 հազ. դրամ:

Շահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը 01.01.2010թ.-ի դրությամբ կազմել է 532399.0 հազ. դրամ, տարվա ընթացքում հաշվի դեբետային շրջանառությունը կազմել է 3326,0 հազ. դրամ, իսկ կրեդիտային շրջանառությունը կազմել է 3326,0 հազ. դրամ: 01.01.2011թ.-ի դրությամբ շահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցների արժեքը կազմել է 1458138.0 հազ. դրամ, հաշվեկշռային արժեքը՝ 532399.0 հազ. դրամ:

Հողամասեր հաշվի մնացորդը ինչպես 01.01.2010թ.-ի դրությամբ, այնպես էլ 01.01.2011թ.-ի դրությամբ կազմել է 157738,0 հազ. դրամ: Այս հաշվի մեջ ներառված է նաև օրենքով սահմանված կարգով անհատույց ստացված հողամասի արժեքը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով Ընկերության հիմնական միջոցների վիճակը, և արձանագրելով հիմնական միջոցների հաշվապահական հաշվառման որոշակի թերություններ, մասնավորապես դրանց մի մասի հաշվեկշռային արժեքի բացակայությունը, առաջարկում ենք հիմնական միջոցների օգտակար ծառայությունը որոշելիս ղեկավարվել ՀՀՀՀ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտի պահանջներով, որի համաձայն պետք է կատարել հիմնական միջոցների պարբերական վերագնահատումներ, որպեսզի հիմնական միջոցների արժեքը էականորեն չտարբերվի դրանց իրական արժեքից, և հաշվեկշռում ճիշտ արտացոլվի դրանց իրական արժեքը: Վերագնահատումներն իրականացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ երբ հիմնական միջոցների միավորը վերագնահատվում է, ապա հիմնական միջոցների ամբողջ դասը, որին պատկանում է այդ ակտիվը, նույնպես պետք է վերագնահատվի, ընդ որում, հիմնական միջոցների տվյալ դասի միավորները պետք է վերագնահատվեն միաժամանակ:

Հաշվապահական հաշվեկշռի համաձայն 01.01.2010թ.-ի դրությամբ Ընկերության պաշարների մնացորդը կազմում է 1010444 հազ. դրամ:

«ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ -ի հաշվապահական հաշվեկշռում հաշվառված ակտիվների գույքագրում իրականացնելու նպատակով, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի 2010թ. հուլիսի 19-ի թիվ 76-Ա հրամանով ստեղծված աշխատանքային խմբի հետ համատեղ գույքագրման աշխատանքները կատարվել են հուլիսի 23-ից օգոստոսի 27-ը, արդյունքներն ամփոփվել են 2010թ. նոյեմբերի 2-18-ը ընկած ժամանակահատվածում:

Ստուգմամբ պարզվել է, որ Ընկերության ակտիվներից 765669.3 հազ.դրամ հաշվեկշռային արժեքով հիմնական միջոցների գույքագրման ժամանակ ավելցուկ կամ պակասորդ չի արձանագրվել: 17719.0 հազ. դրամ հաշվեկշռային արժեքով անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվների փաստացի գույքագրման և հաշվապահական հաշվառման տվյալների միջև առաջացել է 2724.1 հազ. դրամի տարբերություն: 418517.4 հազ. դրամ հաշվեկշռային արժեքով նյութերի և 13173.0 հազ. դրամ հաշվեկշռային արժեքով արագամաշ առարկաների գույքագրման արդյունքում առաջացել են համապատասխանաբար 85812.1 հազ. դրամի և 209.0 հազ. դրամի տարբերություն: Ընկերության Գլխավոր տնօրենի կողմից ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության պետի 19.07.2010թվականի N 76-Ա հրամանով ստեղծված «ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ հաշվապահական հաշվեկշռում հաշվառված ակտիվների գույքագրման աշխատանքային խմբի կողմից կազմված ակտի վերաբերյալ պարզաբանման մեջ ասվում է, որ անավարտ ոչ նյութական ակտիվների գույքագրման ժամանակ առաջացած տարբերության գումարներն արձանագրվել են նախորդ տարիներին, այդ իսկ պատճառով համապատասխան հիմնավորող փաստաթղթեր ներկայացնել չեն կարող: Իսկ հաշվապահական հաշվառման՝ վերամշակման հանձնված նյութեր անալիտիկ 211.8 հաշվի տարբերությունը հաշվապահորեն ձևակերպվել է նախորդ տարիներին, և համապատասխան հիմնավորող սկզբնական հաշվառման փաստաթղթերն արխիվացվել են: Վերամշակման հանձնված նյութերի գծով քանակային տարբերություններ չկան:

Արդյունքում՝ 2010թ. Ընկերության ֆինանսական հաշվետվություններում պայմանավորված նախորդ տարիներին վերամշակման փուլում գտնվող ապրանքանյութական արժեքների փաստացի մնացորդների և շրջանառության ամփոփ տեղեկագրում արտացոլված մնացորդների ճշտմամբ ձևակերպվել է այլ ոչ գործառնական վնաս 88904.0 հազ. դրամ:

Բաժնենասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների, այլ ոչ ընթացիկ ակտիվների, արտադրանքի, դեբիտորական պարտքերի և դրամական միջոցների գույքագրման ժամանակ ավելցուկ կամ պակասորդ չի գրանցվել կամ հիմք են ընդունվել դրանց հաշվապահական հաշվառման տվյալները:

2010թ. համաձայն Ընկերության Գլխավոր տնօրենի մարտի 29-ի թիվ 18 հրամանի, հունիսի 28-ի թիվ 29 հրամանի, սեպտեմբերի 27-ի թիվ 43 հրամանի և

դեկտեմբերի 21-ի թիվ 56 հրամանի՝ Ընկերության գույքագրման հանձնաժողովի կողմից իրականացված հիմնական միջոցների և ապրանքանյութական արժեքների գույքագրումների արդյունքներն ինչպես և նախորդ տարիներում, այժմ էլ ներկայացվել են ռուսերեն բլանկների վրա, առկա են նյութական պատասխանատու անձանց հետ կնքված պայմանագրերը:

Գույքագրման արդյունքներով արձանագրվել է 59.0 գրամ արծաթի և 18.80 գրամ արույրի պակասորդ, որը Կենտրոնական գույքագրման հանձնաժողովի (ԿԳՀ) առ 27.05.2010թ. (Արձանագրություն N ԿԳՀ – 2/10), առ 23.08.2010թ. (Արձանագրություն N ԿԳՀ – 3/10), առ 28.10.2010թ. (Արձանագրություն N ԿԳՀ – 4/10) և առ 11.03.2011թ. (Արձանագրություն N ԿԳՀ – 1/11) նիստերում քննարկումների արդյունքում որոշվել է ձևակերպել արտադրության հաշվին, որպես անվերադարձ կորուստ: Առ 01.01.2011թ. ընդամենը վերականգնվել է որպես նյութական վնասի փոխհատուցում 100,0 հազ. դրամ՝ նախորդ տարիներին արձանագրված պակասորդների դիմաց:

Ընկերության գույքագրման հանձնաժողովի կողմից ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 2000թ. հունիսի 2-ի «Կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման կարգը» հաստատելու մասին թիվ 102 հրամանի պահանջները որոշակիորեն խախտվել են:

Ըստ Ընկերության հաշվապահական հաշվեկշռի՝ 01.01.2011թ. դրությամբ վաճառքների գծով դեբիտորական պարտքերը կազմել են 2435688,0 հազ.դրամ: Ընկերության կողմից տրված ընթացիկ կանխավճարներ հաշվի մնացորդը 01.01.2011թ կազմել է 11415,0 հազ.դրամ: Բյուջեի գծով կարճաժամկետ դեբիտորական պարտքեր հաշվի մնացորդը 01.01.2011թ կազմել է 39235,0 հազ.դրամ, իսկ այլ դեբիտորական պարտքեր հաշվի մնացորդը՝ 33963.0 հազ. դրամ :

Այսպիսով Ընկերության առևտրային դեբիտորական պարտքերի մնացորդը կազմել է 2520301.0 հազ. դրամ, որից 2437520.0 հազ. դրամ դեբիտորական պարտքը (96,7 տոկոս) վերաբերում է ԵՈԳ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ-ին, 38931,5 հազ. դրամ դեբիտորական պարտքի (1,5 տոկոս) մնացորդն առաջացել է 2001-2003թթ. ընթացքում: 01.01.2011թ. դրությամբ դրամական միջոցների և դրանց համարժեքների մնացորդը կազմում է 8028.0 հազ. դրամ:

2010թ.-ին Ընկերությունը գործարքներն իրականացրել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ հետ:

Ընկերության գործարքները հիմնականում վճարվել և ստացվել են բանկային փոխանցմամբ, բացառությամբ առհաշիվ անձանց և ընկերության ֆիրմային խանութների միջոցով իրականացվող գործարքների:

Բանկային հաշիվներով դրամական միջոցների հաշվառման գործընթացը բավարարում է ՀՀ գործող օրենսդրության պահանջներին:

ՀՀ կառավարության 2011թ. մարտի 3-ի «Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների շահույթի բաշխման, շահութաբաժինների հաշվարկման և ՀՀ պետական բյուջե վճարման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի N1194 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N202-Ն որոշմամբ սահմանված կարգով հաշվետու տարվա գործունեության արդյունքներով ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների հաշվարկման հիմքերի վերաբերյալ «ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ խորհրդի կողմից ներկայացված առաջարկության և Ֆինանսական հաշվետվությունների NN 1- 2 ձևերի հետ տվյալների համադրման արդյունքում շեղումներ չեն հայտնաբերվել:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 50 հոդվածի 1-ին կետի ա) ենթակետի հիմքով շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունման սահմանափակումը գործում է: 2010թ. «ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ զուտ ակտիվների արժեքը պակաս է նրա կանոնադրական կապիտալից, հետևաբար ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 114 հոդվածի 3-րդ կետի հիմքով շահութաբաժիններ չեն հայտարարվել և վճարվել: Նախորդ տարիների գործունեության արդյունքներով ՀՀ պետական բյուջեի հանդեպ շահութաբաժինների պարտավորություն չի եղել:

Ընկերությունում հիմնադրամներ, ինչպես նաև անհուսալի դեբիտորական պարտքերի դուրս գրման համար պահուստ չի ստեղծվում:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 43 հոդվածի 3-րդ կետի պահանջի համաձայն լիազոր մարմնին ներկայացված, Ընկերությունում կատարված ստուգման և գույքագրման արդյունքներից բխող, կանոնադրական կապիտալի նվազմանն ուղղված միջոցառումներն ընթացքի մեջ են:

01.01.2011 թվականի դրությամբ «ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ ոչ ընթացիկ պարտավորությունները ակտիվներին վերաբերող շնորհումների հաշվի մնացորդում կազմել են 144051 հազ. դրամ՝ նախորդ տարվա 146790 հազ. դրամի փոխարեն՝ հաշվետու տարվա ընթացքում 2739 հազ. դրամ պետության կողմից

անհատույց տրամադրված հողամասերի վրա գտնվող շենքերի համար հաշվարկված տարեկան մաշվածքի գումարի չափով եկամուտ ճանաչելով ՀՀՀՅՍ 20 «Պետական շնորհների հաշվառում և պետական օգնության բացահայտում» ստանդարտի համաձայն:

01.01.2011թ. դրությամբ գնումների գծով կրեդիտորական պարտքի մնացորդը կազմել է 845802,0 հազ.դրամ: Հարկ է նշել, որ նախորդ տարիներին ԵՈԳ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ մասով սխալ ձևակերպումների արդյունքում արձանագրված դեբիտորական և կրեդիտորական պարտքերի ավելացումները չեն ճշտվել:

01.01.2011թ. դրությամբ ստացված կանխավճարների մնացորդը կազմել է 535,0 հազ.դրամ:

01.01.2011թ. դրությամբ շահութահարկի գծով Ընկերությունը 64907.0 հազ. դրամ գերավճար ունի:

01.01.2011թ. դրությամբ ԱԱՀ-ի գծով Ընկերությունը պետբյուջեի նկատմամբ 37615.7 հազ. դրամ գերավճար ունի:

01.01.2011թ. դրությամբ եկամտահարկի գծով Ընկերությունը պետբյուջեի նկատմամբ 1205.5 հազ. դրամ գերավճար ունի:

01.01.2011թ. դրությամբ գույքահարկի և հողի հարկի գծով Ընկերությունը պետբյուջեի նկատմամբ 226.0 հազ. դրամ գերավճար ունի:

01.01.2011թ. դրությամբ սոցապ.հարկի գծով գերավճարը կազմել է 188,2 հազ.դրամ:

Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների իրացումից հասույթը կազմել է 57973,0 հազ.դրամ, գործառնական այլ եկամուտները կազմել են 9007,0 հազ.դրամ:

Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեքը կազմել է 48731,0 հազ.դրամ, այլ գործառնական գործունեությունից ծախսեր՝ 19346,0 հազ.դրամ:

2010թ. ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում հաշվետու տարվա վնասը կազմել է 215028.0 հազ. դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 42825.0 հազ. դրամ վնասի դիմաց, որի ավելացմանը նպաստել է

- . իրացման ծավալների մոտ 83%կրճատում
 - . վարչական ծախսերի մոտ 8% աճ (պայմանավորված խորհրդի անդամների վարձատրությամբ)
-

. այլ ոչ գործառնական վնաս մոտ 375%՝ նախորդ ժամանակաշրջանի ցուցանիշի նկատմամբ (պայմանավորված նախորդ տարիներին վերամշակման փուլում գտնվող ապրանքանյութական արժեքների փաստացի մնացորդների և շրջանառության ամփոփ տեղեկագրում արտացոլված մնացորդների ճշտմամբ):

Ըստ «ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ եկամուտների և ծախսերի կանխատեսման ու կատարման վերաբերյալ տեղեկանքի՝ 2010թ. ընթացքում հաշվետու ժամանակաշրջանի (աճողական) 2371,0 հազ. դրամ կանխատեսվող եկամտի դիմաց փաստացի ստացվել է 69,7 հազ. դրամ եկամուտ՝ ապահովվելով կատարման 2.9 տոկոս, հաշվետու ժամանակաշրջանի (աճողական) 2139,4 հազ. դրամ կանխատեսվող ծախսերի դիմաց փաստացի կատարվել է 284,7 հազ. դրամ ծախս՝ ապահովվելով կատարման 13,3 տոկոս: Սակայն ծախսերի որոշ հոդվածներ, մասնավորապես՝ աուդիտորական և խորհրդատվական, էլ.էներգիա, գազ, պահակային ծառայություն, աշխատանքի վճարման, կապի ծառայությունների գծով և այլ ծախսեր, գերազանցել են կանխատեսվող ցուցանիշները:

2011թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի կազմման համար առաջարկվում է կազմել ֆինանսատնտեսական գործունեության առողջացման ավելի իրատեսական ծրագիր՝ ելնելով ընկերության կանոնադրական խնդիրների իրագործման տեսանկյունից, որի վերջնական նպատակը պետք է լինի իրացման այն սահմանային ծավալի ապահովումը, որը ձեռնարկությանը կբերի շահութաբերության շեմի հաղթահարման թեկուզև չնչին դրական տեղաշարժ: Դա թույլ կտա խուսափել վերոհիշյալ ծախսային հոդվածների (հիմնականում հաստատուն ծախսերի մասով) փաստացի ցուցանիշերը կանխատեսվողից գերազանցելու փաստերից, առավել ևս, երբ ընկերության գործունեության ոլորտը մեծապես կախված է հունքի գնի համաշխարհային անկանխատեսելի վարքագծից:

Ընկերության հաշվեկշռի կառուցվածքի վերլուծություն:

Ընդհանուր առմամբ հաշվեկշռը համարվում է անբավարար, իսկ կազմակերպությունն էլ անվճարունակ, երբ՝

ա. Ընթացիկ իրացվելիության գործակիցը տվյալ ժամանակաշրջանի վերջում փոքր է 2 - ից: Այն ցույց է տալիս Ընկերության կարճաժամկետ պարտավորությունների՝ ընթացիկ ակտիվներով ապահովվածության աստիճանը:

$$Q_1 = \frac{\text{Ընդամենը ընթացիկ ակտիվներ}}{\text{Ընդամենը ընթացիկ պարտավորություններ}} = \frac{3550436}{852830} = 4.16$$

բ. Սեփական միջոցներով ապահովվածության գործակիցը (սեփական ընթացիկ ակտիվների և ընթացիկ ակտիվների հարաբերակցություն) փոքր է 0,1-ից:

$$Q_2 = \frac{\text{Սեփ. կապիտալ+ոչ ընթ. պարտ-ներ – ոչ ընթ. ակտիվներ}}{\text{Ընթացիկ ակտիվներ}} = \frac{2697606}{3550436} = 0,76$$

Ավարտելով Ընկերության 2010թվականի տարեկան հաշվետվություններում և ֆինանսական փաստաթղթերում բովանդակվող տեղեկությունների հավաստիության ստուգման աշխատանքները՝ պետք է նշել, որ դեռևս առկա են բացթողումներն ու թերացումները ներքին հսկողության համակարգում և հաշվապահական հաշվառման գործընթացներում:

Այսպիսով՝

1.Ներքին վերահսկողության համակարգ.

ա/ առկա են թերացումներ Ընկերության գործունեության վերաբերյալ բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումներով և նախորդ ստուգումներով առաջադրանքների կատարման գործընթացում,

բ/ ակտիվների և պարտավորությունների գույքագրումները /եռամսյակային և տարեկան / կատարվում են գործող կարգի պահանջների խախտումներով:

2. Հաշվապահական հաշվառման գործընթացներ.

ա/ Ընկերության կողմից օգտագործվող համակարգչային ծրագրի թերությունների պատճառով հաշվապահական հաշվառման հաշիվներում առանձին դեպքերում ճիշտ չեն հաշվառվում հաշիվների շրջանառությունները, մնացորդները,

բ/ հաշվապահական հաշվառման քաղաքականության առանձին կետեր ենթակա են վերանայման:

զ/ անհրաժեշտ է Ընկերության ակտիվների և պարտավորությունների վերջնական մեծությունը ճշտելուց հետո «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 43 հոդվածի 3-րդ կետի պահանջներին համապատասխան սահմանված կարգով հայտարարել և գրանցել Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցում:

Բացառությամբ ֆինանսական հաշվետվությունների վրա նախորդ մասերում հիշատակված հարցերի ազդեցությունից, ֆինանսական հաշվետվությունները առ 1-ը հունվարի 2011թ.-ի դրությամբ, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների ու դրամական հոսքերի մասին տալիս են իրական պատկերը (կամ բոլոր էական առումներով ճիշտ են ներկայացված)՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների:

Գտնում են, որ ստեղծված իրավիճակից դուրս գալու համար պետք է ուժեղացվի Ընկերության ֆինանսական կառավարումը, մշակվի մարքեթինգի քաղաքականության հայեցակարգ, վարվի գնային ճկուն քաղաքականություն, իրականացվի ոսկու կորստի ապահովագրման քաղաքականություն, միջոցներ ձեռնարկվի հաստատուն ծախսերը կրճատելու ուղղությամբ:

Վերստուգող

Յ. Հակոբյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 1

« Երևանի ոսկերչական գործարան» Բաց Բաժնետիրական Ընկերության
 Բաժնետերերի ընդհանուր տարեկան 28.06.11թ. Ժողովի կողմից
 ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի

Ժողովին մասնակցում էին 11 բաժնետերեր կամ նրանց լիազոր
 ներկայացուցիչներ, որոնք բաժնետոմսերի ընդհանուր քանակությունից
 / 10 348 896 հատ / հանդիսանում են 8 308 932 բաժնետոմսի սեփականատեր,
 կամ ժողովին ներկա էին 80,29% ձայնի իրավունք ունեցող բաժնետերեր, ինչն
 ապահովում է քվորումը:

Հանձնաժողովի անդամներ՝

Խ. Հովսեփյան

Ա. Ժամհարյան

Մ. Մկրտչյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 2

« Երևանի ոսկերչական գործարան» Բաց Բաժնետիրական Ընկերության
բաժնետերերի ընդհանուր տարեկան 28.06.11թ. Ժողովի կողմից
ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի

Նախօրոք բաժանված քվեաթերթիկների հաշվառումը ցույց տվեց հետևյալ
արդյունքները.՝ (առկա 8 308 932 ձայների քանակից)

1. Ընկերության 2010թ. գործնության տարեկան հաշվետվության հաստատումը.՝

կողմ - 8 308 932 դեմ - 0 ձեռնպահ - 0

Ընկերության 2008թ. տարեկան գործնությունը հաստատվեց:

2. Ընկերության 2010 թվականի ֆինանսատնտեսական գործնությունը ամփոփոխ
տարեկան հաշվետվության հաստատումը.՝

կողմ - 8 308 932 դեմ - 0 ձեռնպահ - 0

Ընկերության 2010թվականի տարեկան ֆինանսատնտեսական գործնությունը
հաստատվեց:

3. Ընկերության 2010թ. շահույթի և վնասի հաշվետվության հաստատումը.՝

կողմ - 8 308 932 դեմ - 0 ձեռնպահ - 0

Ընկերության շահույթի և վնասի հաշվետվությունը հաստատվեց:

4. Ընկերության Վերստուգողի 2010 թվականի հաշվետվության հաստատումը՝

կողմ - 8 308 932 դեմ - 0 ձեռնպահ - 0

5. Ընկերության տնօրենների խորհրդի անդամների ընտրության` ընտրության արդյունքում, որը կատարվել է գումարային (կոմուլյատիվ) ձևով բաժնետերերը իրենց ծայները բաշխել են հետևյալ կերպ.`

1. Արա Պետրոսյան	կողմ`	8 308 932
2. Էմիլ Գրիգորյան	կողմ`	8 308 932
3. Գագիկ Աղաջանյան	կողմ`	8 308 932
4.Սեյրան Սուվարյան	կողմ`	8 308 932
5 . Էդուարդ Մաթևոսյան	կողմ`	8 308 932

Ընկերության տնօրենների խորհրդի անդամների հետևյալ թեկնածուները ընտրվել են.

1. Արա Պետրոսյան
2. Էմիլ Գրիգորյան
3. Գագիկ Աղաջանյան
- 4.Սեյրան Սուվարյան
- 5 Էդուարդ Մաթևոսյան

6. Ընկերության ակտիվների, այդ թվում հիմնական միջոցների վերագնահատման աշխատանքների ընթացքի և արդյունքների մասին հաշվետվության ներկայացում:

կողմ - 8 308 932

դեմ - 0

ծեռնպահ - 0

Հանձնաժողովի անդամներ`

Խ. Հովսեփյան

Ա. Ժամհարյան

Մ. Մկրտչյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 3

« Երևանի ոսկերչական գործարան» Բաց Բաժնետիրական Ընկերության
 Բաժնետերերի ընդհանուր տարեկան 28.06.11թ.. Ժողովի կողմից
 ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի

Ժողովին մասնակցում էին 11 բաժնետերեր կամ նրանց լիազոր
 ներկայացուցիչներ, որոնք բաժնետոմսերի ընդհանուր քանակությունից

/ 10 348 896 հատ / հանդիսանում են 8 308 932բաժնետոմսի սեփականատեր,
 կամ ժողովին ներկա էին 80,29% ձայնի իրավունք ունեցող բաժնետերեր, ինչն
 ապահովում է քվորումը:

Նախօրոք բաժանված քվեաթերթիկների հաշվառումը ցույց տվեց, որ
 օրակարգի առաջին վեց հարցերը բաժնետերերը հաստատել են հետևյալ կերպ.

1. կետ – կողմ 8 308 932 ձայն
2. կետ – կողմ 8 308 932 ձայն
3. կետ – կողմ 8 308 932 ձայն
4. կետ – կողմ 8 308 932 ձայն
5. կետ – կողմ 8 308 932 ձայն
6. կետ – Քանի որ տնօրենների խորհրդի անդամները ընտրվում են գումարային
 /կումուլյատիվ/ ձևով, բաժնետերերն իրենց ձայները բաշխել են հետևյալ կերպ.՝

Տնօրենների խորհրդի անդամներ՝

1. Արա Պետրոսյան	կողմ՝	8 308 932
2. Էմիլ Գրիգորյան	կողմ՝	8 308 932
3. Գագիկ Աղաջանյան	կողմ՝	8 308 932
4. Սեյրան Սուվարյան.....	կողմ՝	8 308 932
5 Էդուարդ Մաթևոսյան	կողմ՝	8 308 932

Հանձնաժողովի անդամներ՝

Խ. Հովսեփյան

Ա. Ժամհարյան

Մ. Սկրտչյան

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է
 «Երևանի ոսկերչական գործարան»
 բաց բաժնետիրական ընկերության
 տնօրենների խորհրդի կողմից
 արձանագրության համարը 4Խ-10
 31.05.11թ.
 տնօրենների խորհրդի

**«Երևանի ոսկերչական գործարան» բաց բաժնետիրական ընկերության
 բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի**

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

28 հունիսի 2011թ.

1. Ընկերության 2010թ. գործունեության տարեկան հաշվետվության հաստատում:
2. Ընկերության 2010թ. ֆինանսական գործունեությունն ամփոփող տարեկան հաշվետվության հաստատում:
3. Ընկերության 2010թ. շահույթի և վնասի հաշվետվության հաստատում:
4. Ընկերության Վերստուգողի 2010թ հաշվետվության հաստատում:
5. Ընկերության տնօրենների խորհրդի անդամների ընտրություն:
6. Ընկերության ակտիվների, այդ թվում հիմնական միջոցների վերագնահատման աշխատանքների ընթացքի և արդյունքների մասին հաշվետվության ներկայացում:

N	Անուն, ազգանուն	Ծննդյան թիվը	Քաղ.	Մասնագիտ.	Պաշտոնը	Սով.բաժնետոմս. «ԵՈԳ» ԲԲԸ
Տնօրենների խորհրդի անդամների թեկնածուներ						
1.	Արա Պետրոսյան	1960	ՀՀ	ճարտարագետ	ՀՀ էկանոմիկայի նախարարի տեղակալ	Չունի
2.	Էմիլ Գրիգորյան	1938	ՀՀ	ճարտարագետ	ԵՈԳ-1 «ԳՆՈՄՈՆ»ԲԲԸ Գլխավոր տնօրեն	5894
3.	Էդուարդ Մաթևոսյան	1945	ՀՀ	իրավաբան	«ԵՈԳ»ԲԲԸ, Իրավաբան	7764
4.	Գագիկ Աղաջանյան	1971	ՀՀ	տնտեսագետ	ԲՏԱ բանկ, ռիսկերի ծառայության պետ	Չունի
5.	Սեյրան Սուվարյան	1960	ՀՀ	տնտեսագետ	Երեվանի պետական համալսարան, դոցենտ	Չունի

Ք Վ Ե Ա Թ Ե Ր Թ Ի Կ

«Երևանի ոսկերչական գործարան» Բաց Բաժնետիրական Ընկերություն.

28 հունիսի 2011թ

բաժնետերերի /լիազորված անձի/ անուն, ազգանուն ձայների/բաժնետոմսերի/թիվը

ՀԱՐՑ 1. «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ 2010թ. տարեկան հաշվետվության հաստատում:
 ԿՈՂՄ ԴԵՄ ՁԵՈՆՊԱՀ

ՀԱՐՑ 2. «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ 2010 թ. ֆինանսական գործունեությունը ամփոփող տարեկան հաշվետվության հաստատում:
 ԿՈՂՄ ԴԵՄ ՁԵՈՆՊԱՀ

ՀԱՐՑ 3. «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ 2010 թ. շահույթի և վնասի հաշվետվության հաստատում:
 ԿՈՂՄ ԴԵՄ ՁԵՈՆՊԱՀ

ՀԱՐՑ 4. «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ վերահսկողի 2010թվականի հաշվետվության հաստատումը :
 ԿՈՂՄ ԴԵՄ ՁԵՈՆՊԱՀ

ՀԱՐՑ 5. «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ տնօրենների խորհրդի անդամների ընտրություն հետևյալ կազմով.
 ԿՈՂՄ ԴԵՄ ՁԵՈՆՊԱՀ

ՀԱՐՑ 6. Ընկերության ակտիվների, այդ թվում հիմնական միջոցների վերագնահատման աշխատանքների ընթացքի և արդյունքների մասին հաշվետվության ներկայացում:
 ԿՈՂՄ ԴԵՄ ՁԵՈՆՊԱՀ

ԳՈՒՄԱՐԱՅԻՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՉԱՅՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ x 5 =

	ձայն
	ձայն
	ձայն
	ձայն
	ձայն

..... ԲԱԺՆԵՏԻՐՈՋ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ս.թ. հունիսի 28 -ին, ժամը 16⁰⁰ «ԵՈԳ» ԲԲԸ (Արշակունյաց 12) տեղի կունենա «Երևանի ոսկերչական գործարան» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը:

- ՕՐԱԿԱՐԳՈՒՄ**
1. Ընկերության 2010թ. գործնության տարեկան հաշվետվության հաստատում:
 2. Ընկերության 2010թ. ֆինանսական գործունեությունը ամփոփող տարեկան հաշվետվության հաստատում:
 3. Ընկերության շահույթի և վնասի հաշվի հաստատում:
 4. Ընկերության Վերստուգողի 2010թ.ի հաշվետվության հաստատում:
 5. Տնօրենների խորհուրդի անդամների ընտրություն:
 6. Ընկերության ակտիվների, այդ թվում հիմնական միջոցների վերագնահատման աշխատանքների ընթացքի և արդյունքների մասին հաշվետվության ներկայացում:

Այլ տեղեկությունների համար դիմել «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ, հեռ. 52-53-21:

Խորհուրդ

Ընկերության տնօրենների